ՍՄԿԿ XXIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարը խոշորագույն իրադարձություն էր մեր երկրի, սոցիալիստական երկրների, ամբողջ համաշխարհային կոմունիստական, բանվորական և ազգային-ազատագրական շարժումների գաղափարական-քաղաքական կյանքում։ Այն արդեն դարձել է համաշխարհային պատմագրության սեփականությունը և դա միանգամայն օրինաչափ է, քանի որ մեծ Լենինի ստեղծած կոմունիստական կուսակցության համագումարները հանդիսանում են մեր ժողովրդի և ամբողջ համաշխարհային կոմունիստական շարժման պատմության մեջ դարագլուխ կազմող իրողություններ։

ՍՄԿԿ XXIV համագումարը, ի թիվս այլ հարցերի, մեծ ուշադրություն դարձրեց նաև հասարակական գիտությունների զարգացման խնդիրներին։

Համագումարին՝ Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ ասված է. «Պակաս կարևոր խնդիրներ չեն ծառացած նաև հասարակական գիտությունների առջև։ ՍՄԿԿ Կենտկոմը հաշվետու ժամանակաշրջանում այդ հարցի առթիվ ընդունել է հատուկ ծավալուն որոշում։ Ընդլայնվել և ճշգրտվել են ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի և հասարակական գիտությունների ակադեմիայի խնդիրները։ Վերջին տարիներս գիտությունների ակադեմիայի սիստեմում ստեղծվել են մի շարք նոր հումանիտար ինստիտուտներ, որ հնարավորություն է ընձեռել ուժեղացնել ՍՍՀՄ-ի ու արտասահմանյան երկրների սոցիալ-անտեսական զարգացման պրոբլեմների, համաշխարհային հեղափոխական պրոցեսի ուսումնասիրությունը, բարելավել գիտական ինֆորմացիան։ Հասարակական գիտությունների ավելի ու ավելի վճռական շրջադարձ դեպի այն պրոբլեմների մշակումը, որոնք հրատապ են ներկայի և ապագայի համար՝ ահա թե մեզ ինչ է հարկավոր»[1]։

Հաշվետվության մեջ խոսվում է նաև այն մասին, որ «Մեր կուսակցությունը ջանքեր չի խնայում, որպեսզի ապահովի հասարակական ու բնական գիտությունների ամբողջ ճակատի բեղմնավոր ծավալումը»[2]։

Համագումարի որոշումներում ընդգծվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ավելի է ակտիվացել ՍՄԿԿ-ի գաղափարական-տեսական գործունեությունը։

ՍՄԿԿ XXIII—XXIV համագումարների միջև ընկած ժամանակահատվածում սովետական պատմաբանները լուրջ հաջողությունների են հասել մեծ

---

1 *Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 136։*

2 *Նույն տեղում, էջ 134։*

հասարակության զարգացման պրոցեսի տարբեր բնագավառների ուսումնասիրության ուղղությամբ։

Համագումարը որոշակի նվաճումներով դիմավորեցին նաև սովետահայ պատմաբանները՝ գաղափարական պայքարի մարտական ջոկատներից մեկը։ Բավական է ասել, որ այդ ժամանակահատվածում ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը հեղինակային մեծ կոլեկտիվի ուժերով պատրաստել ու հրատարակել է Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ակադեմիական հրատարակության 7, 8 հատորները։ Տպագրվում են 1-ին, 4-րդ և 5-րդ հատորները, ավարտվում են 2-րդ, 3-րդ և 6-րդ հատորների խմբագրական աշխատանքները։

Ստեղծագործական մեծ աշխատանք է ծավալվել հայրենական պատմության շատ կարևոր ու արդիական պրոբլեմների մշակման ուղղությամբ։ Հրատարակվել են արժեքավոր աշխատություններ, որոնցում ավելի լիակատար ձևով է բացահայտված Վ. Ի. Լենինի դերը ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման, Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի, սովետական իշխանության հաստատման գործում և այլն։

Անդրկովկասյան երեք հանրապետությունների պատմաբանների համատեղ ուժերով ստեղծվել է Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման պատմությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրություն։ Հրատարակության են պատրաստվել մենագրություններ՝ նվիրված Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության պատմությանը։

Ավելի է ընդլայնվել պատմական ուսումնասիրությունների շրջանակը, սերտացել է պատմական գիտության և կոմունիստական շինարարության օրգանական կապը գաղափարական պայքարի արդի փուլի խնդիրների հետ։ Նվաճումների որոշակի ցուցանիշներից են նաև սովետահայ պատմաբանների ելույթները միջազգային ու միութենական պատմագիտական կոնգրեսներում, կոնֆերանսներում ու սիմպոզիումներում։

ՍՄԿԿ XXIV համագումարը նոր կարևոր խնդիրներ դրեց սովետական պատմաբանների առջև։ Դրանց իրականացումը առաջին հերթին պահանջում է խորը ուսումնասիրել համագումարի նյութերը, վերլուծել գիտահետազոտական աշխատանքի վիճակը, նշել պատմական գիտության զարգացման և պատմական գիտելիքների մասսայականացման կոնկրետ խնդիրներն ու հեռանկարները։

Կոմունիստական շինարարության հարուստ փորձի գիտական վերլուծությունն ու ընդհանրացումը եղել և մնում են սովետական պատմաբանների առաջնահերթ խնդիրներից։ Նոր, վիթխարի պլանները պատմաբաններից պահանջում են էլ ավելի ակտիվացնել այդ ուղղությամբ տարվող գիտահետազոտական աշխատանքները։

ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը պարունակում են պատմական կարևորագույն երևույթների ու պրոցեսների սկզբունքային գնահատումներ. դա առաջին հերթին վերաբերում է մեր հայրենիքի պատմության պրոբլեմներին։ «...Մեր երկրում,—ասված է ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ,— սոցիալիզմը հաղթանակեց արդեն 30-ական թվականների երկրորդ կեսին։ Այդ ժամանակվանից ի վեր անցել է սովետական մարդկանց հերոսական աշխատանքի և պայքարի ավելի քան երեք տասնամյակ։ Այն ժամանակվա մեր տնտեսությունը և ժամանակակից էկոնոմիկան հիմնվում էին միևնույն տիպի

արտադրահարաբերությունների վրա, միևնույն տնտեսական օրենքների՝ սոցիալիզմի օրենքների վրա։ Դրա հետ մեկտեղ չի կարելի չտեսնել այն նոր կարևոր մոմենտները, որոնք ժամանակակից էկոնոմիկան տարբերում են 30-ական թվականների վերջերի էկոնոմիկայից»[3]։

Այդ նոր կարևոր մոմենտներն են ժողովրդական տնտեսության միանգամայն նոր մասշտաբները, պլանավորման, կառավարման նոր ձևերն ու մեթոդները, գիտատեխնիկական հեղափոխությունը և այլն, որոնք և հանդիսանում են սովետական հասարակության զարգացման արդի պատմական փուլի առանձնահատուկ գծերը։

Պատմաբանների առջև լուրջ խնդիրներ են ծառանում՝ խոր ու համակողմանի ուսումնասիրել և իմաստավորել բոլոր սոցիալ-տնտեսական պրոցեսները, որոնք դարգանում են մեր երկրում և նրա սահմաններից դուրս՝ կապված դիսատեխնիկական հեղափոխության հետ։

ՍՄԿԿ XXIV համագումարը նշեց, որ համաշխարհային երկու սիստեմների տնտեսական և գիտատեխնիկական մրցակցությունը հանդիսանում է սոցիալիզմի և կապիտալիզմի միջև դասակարգային պայքարի ոլորտը, որի դերը այսօր խիստ աճել է։

Նոր հնգամյակի պլանների հաջող իրականացումը սովետական ժողովրդի նոր ավանդը կլինի սոցիալիստական երկրների տնտեսական հզորության ուժեղացման, համաշխարհային երկու սիստեմների տնտեսական մրցակցության մեջ նրանց դիրքերի ամրապնդման ընդհանուր գործում։ Այսօր այդ պրոցեսների գիտական մանրազնին ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ստացել։

Պատմաբանները պետք է ավելի շատ զբաղվեն գիտության ու տեխնիկայի պատմության ուսումնասիրությամբ, որի վրա դեռևս անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում։

Նոր և նորագույն ժամանակաշրջաններով զբաղվող պատմաբանները երբեմն թույլ են համագործակցում առանձին գիտությունների պատմաբանների հետ։ Ներկայումս գիտությունը վեր է ածվում անմիջական արտադրողական ուժի, և նրա զարգացման համար պահանջվում է գիտականորեն հիմնավորված պլան, որը պայմանավորված է ընդհանուր հասարակական առաջընթացով։ Պատմաբանները պարտավոր են ամենագործարար մասնակցությունն ունենալ այդ գործում։

Այսօր սովետական հասարակության պատմության մասին նոր ուսումնասիրություններ դրել հնարավոր չէ առանց գիտատեխնիկական հեղափոխության պրոցեսների խոր վերլուծության։ Ընդհանրապես, հեռավոր անցյալի պատմության ուսումնասիրության ժամանակ էլ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել գիտության ու տեխնիկայի պատմության հարցերին, բացահայտել նրանց ազդեցությունը հասարակական-տնտեսական ֆորմացիաների զարգացման ու փոփոխման վրա, ձգտել ավելի խոր ու համակողմանի լուսաբանել մարդկության պատմական զարգացման օրինաչափությունները։

ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների լույսի տակ ներկայումս անհրաժեշտ է ավելի հանգամանորեն հետազոտել գիտատեխնիկական առաջընթացի բազայի վրա հասարակական արտադրության աճի և աշխատավորու-

---

3 Նույն տեղում, էջ 59։

թյան նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման միջև փոխադարձ կախվածության ուժեղացման պրոցեսը, որը սովետական հասարակության զարգացման կարևոր օրինաչափություններից է։

ՍՄԿԿ XXIV համագումարում ուշադրություն դարձվեց նաև սովետական հասարակության զարգացման այլ գործոնների, այդ թվում նաև մեր հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխության վրա։ Այդ պրոբլեմով, սակայն, մեր պատմաբանները դեռևս անհրաժեշտ չափով չեն զբաղվում։ Այսօր անհետաձգելի պահանջ է դարձել՝ ակտիվացնել նաև այդ ուղղությամբ տարվող աշխատանքները։ Առաջին հերթին գա վերաբերում է սովետական բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրությանը, որը առաջատար դերք է գրավում սոցիալիստական արտադրական հարաբերությունների սիստեմում, ավելի ու ավելի է աճում նրա ազդեցությունը սովետական հասարակության բոլոր ոլորտների վրա։ Անհրաժեշտ է ավելի հանգամանալից ուսումնասիրել բանվորների կուլտուրական մակարդակի աճը, նրանց քաղաքական ակտիվության բարձրացումը կոմունիստական շինարարության ներկա փուլում, բացահայտել այդ պրոցեսների փոխադարձ սերտ կապը։

Հատուկ նշանակություն է ստանում Միության բնակչության վերջին մարդահամարների տվյալների գիտական մշակումը, մարդահամարներ, որոնք արտացոլում են կոմունիստական շինարարության տարիներին սովետական հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ տեղի ունեցած հսկայական տեղաշարժերը։

Անհրաժեշտ է շարունակել և ավելի բազմակողմանի ուսումնասիրել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի աճող դերը արդի ժամանակաշրջանում։ Մեր օրերում ավելի ու ավելի է խորանում բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության մերձեցումը։

Պատմաբանների խնդիրն է համակողմանիորեն ցույց տալ բանվոր դասակարգի առաջատար դերը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում, գիտատեխնիկական առաջադիմության արագացման, տնտեսության կառավարման կատարելագործման մեջ։ Անհրաժեշտ է ուսումնասիրել և ընդհանրացնել սովետական բանվոր դասակարգի աշխատանքային փառավոր ավանդույթները։

Տեսական մեծ նշանակություն ունի հաշվետու զեկուցման մեջ արված այն եզրահանգումը, որ «սոցիալիստական շինարարության տարիներին մեր երկրում առաջացավ մարդկանց պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդը։ Համատեղ աշխատանքում, սոցիալիզմի համար մղած պայքարում, նրա պաշտպանության մարտերում ծնունդ առան դասակարգերի և սոցիալական խմբերի, ազգերի ու ազգությունների նոր, ներդաշնակ հարաբերություններ՝ բարեկամության և համագործակցության հարաբերություններ։ Մեր մարդիկ զոդված են մարքս-լենինյան գաղափարախոսության, կոմունիստական հասարակարգի կառուցման վսեմ նպատակների ընդհանրությամբ»[4]։

Պատմաբանների խնդիրն է ուսումնասիրել սովետական ժողովրդի՝ որպես մարդկանց պատմական նոր ընդհանրության առաջացումն ու զարգացումը։

Պատահական չէ, որ համագումարում մի շարք պատգամավորներ իրենց ելույթներում մեծ ուշադրություն էին դարձնում այդ պրոբլեմի վրա, շոշափում

---

[4] Նույն տեղում, էջ 119։

դրա դիտական մշակման հետ կապված հարցեր։ Նրանք իրավացիորեն նշում էին, որ բավարար չափով չեն լուսաբանվում ազգությունների մերձեցման, սովետական ժողովրդի, որպես մարդկանց պատմական նոր ընդհանրության, ազգային հարաբերությունների զարգացման պրոբլեմները։ Դրանց նվիրված, հարուստ փաստական նյութերի հիման վրա ընդհանրացված ու փաստարկված աշխատությունները կնպաստեն գաղափարական աշխատանքի հետագա ուժեղացմանը, աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակությանը, սուր դենք կհանդիսանան գաղափարական հակառակորդների դեմ մղվող պայքարում։

Համագումարի նյութերն ու որոշումները պատմաբանների առջև խնդիր են դնում հանգամանորեն ուսումնասիրել ինտերնացիոնալ կապերի զարգացումը մարդկանց պատմական նոր ընդհանրության առաջացման պրոցեսում, բանվոր դասակարգի սոցիալիստական շահերի և կոմունիստական գաղափարների բազայի վրա, սովետական հասարակության միասնության ամրապնդման մեջ։ Տվյալ թեմատիկային նվիրված աշխատություններում հատուկ տեղ պետք է տրվեն մշակույթի և մշակութային փոխադարձ կապերի պատմությանը։ Պետք է ավելի լայն լուսաբանվի ռուս ժողովրդի, առաջին հերթին ռուսական բանվոր դասակարգի դերը միութենական հանրապետությունների կյանքում սոցիալիստական ազգերի առաջացման մեջ, ՍՄԿԿ-ի լենինյան ազգային քաղաքականության հետևողականորեն կենսագործման ասպարեզում։

ՍՍՀՄ-ի կազմակերպման 50-ամյակի կապակցությամբ մեր պատմաբանները պետք է ստեղծեն արժեքավոր աշխատություններ, որոնցում ցույց տրվի նրա տեղը համաշխարհային պատմության մեջ, նրա ազդեցությունը ՍՍՀՄ-ի ժողովուրդների ճակատագրի և մարդկության զարգացման ընթացքի վրա։

Սոցիալիստական դեմոկրատիայի զարգացումը ևս պահանջում է ավելի համակողմանի ուսումնասիրություն։ Անհրաժեշտ է պատմաբանների ուշադրությունը բևեռել սովետների, պետական կառավարման մյուս մարմինների և աշխատավորների մասսայական կազմակերպությունների, առաջին հերթին արհմիությունների և կոմերիտմիության պատմության վրա։

«Կուսակցությունը լուրջ նշանակություն է տվել մեր պետության պատմության ճիշտ, օբյեկտիվ լուսաբանմանը,— ասված է հաշվետու զեկուցման մեջ,— սուր, արդարացի քննադատության ենթարկվեցին սովետական ժողովրդի պատմական ուղին ոչ կուսակցական, արտադասակարգային դիրքերից դնահատելու, նրա սոցիալիստական նվաճումների նշանակությունը նսեմացնելու առանձին փորձեր։ Միևնույն ժամանակ կուսակցությունը ցույց տվեց այն դոգմատիկ պատկերացումների սնանկությունը, որոնք անտեսում են վերջին տարիներս մեր հասարակության կյանքում տեղի ունեցած դրական մեծ փոփոխությունները։ Անցած տարիների փորձը համոզիչ կերպով հաստատեց, որ անհատի պաշտամունքի հետևանքների, ինչպես նաև սուբյեկտիվիստական սխալների հաղթահարումը բարերար կերպով անդրադարձավ երկրի ընդհանուր քաղաքական և ամենից առաջ գաղափարական իրադրության վրա։ Մենք հավատարիմ ենք եղել ու հավատարիմ կմնանք մարքսիզմ-լենինիզմի արմատական սկզբունքներին և երբեք ոչ մի դիջում չենք անի գաղափարական հարցերում»[5]։

Ղեկավարվելով այս սկզբունքով, մեր պատմաբանները քաջ գիտակցում

[5] Նույն տեղում, էջ 162։

են, որ մեր հայրենիքի պատմության խոր գիտական, կուսակցական-դասակարգային դիրքերից լուսաբանումը հսկայական նշանակություն ունի աշխատավորների կոմունիստական դաստիարակության, նոր մարդու ձևավորման համար։

Աճող սերնդին հայրենասիրության ոգով դաստիարակելու գործը նույնպես մեր պատմաբանների կարևորագույն խնդիրներից է։

Մարքսիստական-լենինյան տեսության անաղարտության համար պայքարը աջ և «ձախ» ռևիզիոնիզմի, դոգմատիզմի և սուբյեկտիվիզմի դեմ շարունակում է մնալ պատմաբանների առաջնահերթ խնդիրներից մեկը։

Համագումարում ամենայն սրությամբ դրվեց բուրժուական գաղափարախոսության, ազգայնամոլության դեմ անողոք պայքարի ուժեղացման անհրաժեշտության հարցը, քանի որ բուրժուական գաղափարախոսներն ու պրոպագանդան օգտագործում են ազգայնամոլական միտումները։

Պատմաբանների խնդիրն է ավելի անողոք պայքար ծավալել բուրժուական պատմագրության դեմ, ժամանակին վճռական հարված տալ սովետական հասարակության պատմության, սոցիալիստական դեմոկրատիայի, ՍՍՀՄ խաղաղասիրական արտաքին քաղաքականության նկատմամբ բուրժուական պատմագրության ոտնձգություններին և մերկացնել նրա կողմից ժամանակակից կապիտալիզմի ջատագովման բոլոր փորձերը։

Հաշվետու զեկուցման մեջ կարևոր դրույթ է առաջ քաշված այն մասին, որ ազգային-ազատագրական պայքարը շատ երկրներում փաստորեն սկսել է վերաճել ինչպես ֆեոդալական, այնպես էլ կապիտալիստական հարաբերությունների դեմ։ Պատմաբանների խնդիրն է ուսումնասիրել ժամանակակից ազգային-ազատագրական շարժման տարբեր ձևերն ու միտումները, բացահայտել սոցիալիզմի, համաշխարհային կոմունիստական, բանվորական և ազգային-ազատագրական շարժումների դեմ՝ իմպերիալիստների պայքարի ձևերն ու մեթոդները։

Պատմաբանները պետք է շարունակեն և ավելի հանգամանորեն վերլուծեն ժամանակակից կապիտալիզմի զարգացման նոր երևույթները, աշխարհի ոչ սոցիալիստական մասի զարգացման վրա համաշխարհային սոցիալիստական սիստեմի ազդեցության ուղիներն ու ձևերը։

Համաշխարհային ասպարեզում կապիտալիզմի և սոցիալիզմի ուժերի հակամարտությունը, ինչպես նաև հեղափոխական ուսմունքը ամլացնելու, սոցիալիստական և կոմունիստական շինարարության պրակտիկան խեղաթյուրելու՝ զանազան տեսակի ռևիզիոնիստների փորձերը մեզանից պահանջում են այսուհետև ևս ավելի մեծ ուշադրություն նվիրել տեսության պրոբլեմներին, նրա ստեղծագործական զարգացմանը։

ՍՄԿԿ XXIV համագումարը հզոր խթան հանդիսացավ հայրենական և համաշխարհային պատմության խոշոր պրոբլեմների մշակման համար, լուրջ խնդիրներ դրեց պատմաբանների առաջ։ Կասկածից վեր է, որ մեր պատմաբանները չանքեր չեն խնայի իրենց աշխատություններում իրականացնելու կոմունիստական կուսակցության ցուցումները, այսուհետև ևս կուսակցական դիրքերից կուսումնասիրեն և կլուսաբանեն մեր ժողովրդի և հայրենիքի անցյալն ու ներկան, իրենց ուշադրությունը կկենտրոնացնեն կոմունիստական շինարարության և նոր մարդու դաստիարակման առաջնահերթ խնդիրների վրա։